ԿԱՐԾԻՔ

Արփինե Դավիթի Սարգսյանի «ՀՀ տնտեսության մրցունակության բարելավման հիմնախնդիրները ինտեգրացիոն գործընթացի պայմաններում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.01 – «Տնտեսագիտության տեսություն և տնտեսագիտական մտքի պատմություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Ազգային տնտեսությունների առջև կանգնած սոցիալ-տնտեսական տարաբնույթ մարտահրավերների լուծման առանցքային ուղին տնտեսության մրցունակության շարունակական բարելավման ապահովումն է՝ տնտեսության մրցակցային առավելությունների և դրանց զարգացման ուղիների բացահայտման ճանապարհով: Տնտեսության մրցունակության շարունակական աճը ներկայումս դիտարկվում է ցանկացած երկրի տնտեսական քաղաքականության կարևորագույն ռազմավարական առաջնահերթություն, ինչով էլ պայմանավորված՝ ձեռք է բերում առանձնահատուկ կարևորություն: Ըստ որում, մրցակցային առավելությունների ձևավորումը և զարգացումը կարևորվում է ինչպես արտադրանքի (ապրանքների և ծառայությունների), այնպես էլ կազմակերպությունների, ճյուղերի, տարածաշրջանների և ամբողջ երկրի մակարդակով: Ուստի, երկրի ազգային մրցունակության գնահատումը, առկա հիմնախնդիրների վերհանումը և մրցունակության բարելավման հնարավորությունների բացահայտումը ձեռք է բերում խիստ կարևոր նշանակություն: Այդ գործում իր էական դերակատարումը ունի երկրի մասնակցությունը ինտեգրացիոն միավորներում, ինչը կարող է էականորեն նպաստել երկրի մրցակցային առավելությունների իրացմանը: Քանի որ, նշված խնդիրները բնորոշ են նաև ՀՀ-ին, ուստի ինտեգրացիոն գործընթացների պայմաններում ՀՀ-ի մրցունակության բարելավման հնարավորությունների ուսումնասիրությունը, մրցունակության գնահատման գործիքակազմի, մեթոդների կատարելագործման մոտեցումների ներկայացումը դառնում է հետազոտական արդիական և հրատապ խնդիր:

Ատենախոսության նպատակը, խնդիրները և կառուցվածքը:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել ՀՀ տնտեսության մրցունակության առանձնահատկություններն ու պայմանները, դիտարկել մրցակցային առավելությունների ձևավորման հիմնախնդիրները, ինչպես նաև առաջարկներ ներկայացնել ՀՀ տնտեսության մրցունակության բարելավման ուղիների վերաբերյալ:

Այդ նպատակին համապատասխան առաջադրվել են հետազոտության կառուցվածքը կանխորոշող հետևյալ խնդիրները:

1. Ուսումնասիրել ազգային տնտեսության մրցունակության գնահատման տեսամեթոդական մոտեցումները, բացահայտել մրցունակության հասկացության տարաբնույթ ուղղությունները և առանձնահատկությունները,
2. Բացահայտել մրցունակության բարելավման, մրցակցային առավելությունների ձևավորման գործոնները, բնորոշել դրանց փոխադարձ կապը և ազդեցությունը մրցունակության մակարդակի վրա,
3. Գնահատել առանձին գործոնների ազդեցությունը մրցունակության մակարդակի վրա,
4. Իրականացնել միջազգային մրցունակության գնահատման մեթոդական մոտեցումների համեմատական վերլուծություն,
5. Դիտարկել ազգային տնտեսության մրցունակության և տնտեսական ինտեգրացիայի փոխկապակցվածությունը,
6. Գնահատել ինտեգրացիոն խմբավորման անդամ երկրների մրցունակության ներուժը, առանձնահատկությունները ինտեգրացիոն գործընթացների պայմաններում (Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների օրինակով),
7. Դիտարկել ՀՀ տնտեսության մրցունակությունը բնութագրող ցուցանիշները, ուսումնասիրել դրանց դինամիկան,
8. Բացահայտել ՀՀ տնտեսության մրցունակության ապահովման և բարելավման հիմնախնդիրները,
9. Բացահայտել ինտեգրացիոն գործընթացների պայմաններում ՀՀ տնտեսության մրցունակության բարելավման հնարավորությունները:

Ուսումնասիրության օբյեկտը Հայաստանի Հանրապետության միջազգային մրցունակությունն է՝ ինտեգրացիայի պայմաններում, իսկ ուսումնասիրության առարկան՝ պայմանների ու գործոնների ամբողջությունն է, որն ապահովում է երկրի միջազգային մրցունակությունը:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության տեքստը շարադրված է 158 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

Ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, կիրառման ոլորտները, ձևակերպված են հետազոտության նպատակն ու հիմնախնդիրները, հետազոտության առարկան և օբյեկտը, ներկայացված են հետազոտության հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը, դրանց գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Միջազգային մրցունակության տեսամեթոդական հիմնադրույթները»** գլխում իրականացվել է միջազգային մրցունակության էության,

բնութագրիչների, տեսությունների ուսումնասիրություն և վերլուծություն: Դիտարկվել են ազգային տնտեսության մրցունակության ձևերը, դրանցից յուրաքանչյուրի վրա ազդող գործոնները: Իրականացվել է նաև միջազգային մրցունակության գնահատման՝ տարբեր ազգային և միջազգային կազմակերպությունների, հետազոտական խմբերի կողմից առաջարկված մոտեցումների ուսումնասիրություն և համեմատական վերլուծություն: Գլխում իրականացվել է նաև միջազգային մրցունակության և դրա վրա ազդող առանձին գործոնների միջև կապի գնահատում՝ կոռելացիոն-ռեգրեսիոն վերլուծության միջոցով:

Ատենախոսության երկրորդ՝ **«Ազգային տնտեսության մրցունակության ներուժի վրա ազդող գործոնների վերլուծությունը՝ ինտեգրացիոն գործընթացների պայմաններում»** գլխում ներկայացվել է միջազգային մրցունակության և տնտեսական ինտեգրացիայի գործընթացների փոխազդեցությունը: Ուսումնասիրություններն իրականացվել են Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների տվյալների հիման վրա: Ընդ որում, իրականացվել է 2013-2019թթ.-ի համար փոխադարձ և միջազգային առևտրի, առևտրի կենտրոնացման և դիվերսիֆիկացիայի, ներդրումային-ֆինանսական և այլ ցուցանիշների վերլուծություն՝ ինտեգրացիոն խմբավորման անդամ երկրների վիճակագրական ծառայությունների տվյալների բազաների հիման վրա: Իրականացված վերլուծությունների արդյունքում առանձնացվել են ԵԱՏՄ անդամ երկրների մրցունակության բնութագրիչները, առկա հիմնախնդիրները, ինչպես նաև ներկայացվել են այդ երկրների մրցունակության բարելավմանը նպաստող պայմանները:

Ատենախոսության երրորդ՝ «Միջազգային մրցունակության բարելավման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում» գլխում իրականացվել է ՀՀ տնտեսության մրցունակությունը պայմանավորող գործոնների, դրանց դինամիկ փոփոխության վերլուծություն՝ 2012-2019թթ համար: ՀՀ տնտեսության մրցունակության քանակական գնահատումն իրականացվել է արտաքին առևտրում մեր երկրի ունեցած համեմատական (արտահայտված) առավելությունների գործակցի հաշվարկմամբ՝ հունգարացի տնտեսագետ Բելա-Բալասայի բանաձևով, որի արդյունքում առանձնացվել են ՀՀ համաշխարհային առևտրին մասնակցությունը պայմանավորող, մրցակցային առավելություններ ունեցող և նման առավելություններ չունեցող ապրանքատեսակները: Մրցունակության վարկանիշային, ինտեգրալային գնահատման նպատակով կառուցվել է նոր համաթիվ՝ **«Մրցունակության ներուժի» ինտեգրալային համաթիվը,** որի կազմում ներառվել են մրցունակության ներուժը տարբեր կողմերից բնութագրող մասնակի համաթվեր: Հաշվարկները, գործոնային, կլաստերային վերլուծությունները, համաթվի նշանակալիության ստուգումն իրականացվել է SPSS ծրագրային փաթեթի կիրառմամբ: Առանձնացվել են ՀՀ տնտեսության մրցունակության բարելավմանը նպաստող և խոչընդոտող ցուցանիշները,

դիտարկվել են ՀՀ մրցունակության հիմնախնդիրները, առաջարկվել դրանց լուծման հիմնական ուղիները:

Ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում ներկայացված են հետազոտության արդյունքում ձևակերպված հիմնական եզրակացությունները և աշխատանքում արծարծվող հիմնախնդիրների լուծման կոնկրետ մոտեցումները, որոնք բխում են ատենախոսության տրամաբանությունից և արված վերլուծություններից:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթը, ստացված արդյունքների հավաստիությունը: Հետազոտության ընթացքում ստացվել են տեսամեթոդական և կիրառական նշանակության մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթ են ներկայացված հետևյալները:

1. Վերլուծվել են միջազգային մրցունակության՝ տարբեր հետազոտողների, միջազգային կազմակերպությունների կողմից տրված սահմանումները, որոնց ընդհանրացման արդյունքում հեղինակն առաջարկել է ազգային տնտեսության մրցունակության սեփական սահմանում:
2. ԵԱՏՄ անդամ երկրների մրցունակության ներուժի, դրա առանձին ուղղությունների (արտաքին և փոխադարձ առևտուր, ֆինանսական և ներդրումային ներուժ) առանձնահատկությունների գնահատման հիման վրա բացահայտվել են այդ երկրներում առկա հիմնախնդիրները, ներկայացվել մրցունակության ներուժի իրացման հնարավորությունները:
3. Արտահայտված համեմատական առավելությունների գործակցի կիրառմամբ իրականացվել է ՀՀ արտահանման ապրանքային կառուցվածքի վերլուծություն, որի արդյունքում առանձնացվել են ՀՀ արտաքին առևտրի ներուժային ուղղությունները:
4. Մշակվել և կառուցվել է նոր՝ մրցունակության ներուժի ինտեգրալային համաթիվ, որի կազմում որպես ենթահամաթվեր ընդգրկված տարբեր համաթվերի կշռային գործակիցները հաշվարկվել են յուրաքանչյուր տարվա համար առանձին՝ ըստ դրանց հարաբերական կարևորության:

Ատենախոսությունում իրականացված վերլուծություններից բխող առաջարկությունները, ինչպես նաև ազգային տնտեսության մրցունակության բարելավման հիմնախնդիրների լուծման համար առաջարկված միջոցառումները կարող են օգտագործվել ՀՀ գերատեսչությունների կողմից՝ Հայաստանի արտաքին առևտրի, ինստիտուցիոնալ զարգացման, նորարարությունների խթանման ուղիների մշակման գործընթացներում: Ուսումնասիրությունների արդյունքները կարող են կիրառվել միջազգային մրցունակության հիմնախնդիրներով հետաքրքրվող, մրցունակության ներուժի գնահատում և վերլուծություն իրականացնող տնտեսագետների և հետազոտողների համար:

Ատենախոսության արդյունքները քննարկվել են մի շարք ազգային և միջազգային գիտաժողովների, համաժողովների, մասնագիտական քննարկումների ընթացքում, արտացոլված են հայկական և միջազգային ամսագրերում, գիտաժողովների նյութերի ժողովածուներում հրապարակված 12 (տասներկու) գիտական հոդվածներում:

Դիտողություններ աշխատանքի վերաբերյալ:

1. Հեղինակը ատենախոսության առաջին գլխում միջազգային առևտրի դասական տեսությունները նույնացնում է միջազգային մրցունակության հասկացության հետ, մինչդեռ դրանք նույնը չեն: Միջազգային առևտրի տեսությունները բացատրում են, թե ինչու են երկրները միմյանց հետ առևտուր անում, իսկ միջազգային մրցունակության տեսությունը բացատրում է, թե ինչու այդ առևտրում նրանց մի մասը ավելի հաջողակ են, քան մյուսները:
2. Գովելի է հեղինակի ձգտումը՝ ներկայացնելու «ազգային տնտեսության մրցունակության» հասկացության սեփական սահմանում, սակայն այդ սահմանումը ավելի շատ հարցեր է առաջացնում, քան պատասխաններ պարունակում: Մասնավորապես, լրացուցիչ մեկնաբանման կարիք ունի, թե ինչ նկատի ունի հեղինակը **«քաղաքական, սոցիալ-տնտեսական, ֆինանսական ինստիտուտների համակարգված համախումբ»** և **«տարածաշրջանային և համաշխարհային շուկաներում մրցակցային ֆինանսական, ներդրումային, առևտրային, նորարարական ներուժի ձևավորում և իրացում»** ասելով: Նման ձևակերպումները շատ ընդհանրական են և կարելի է միայն գուշակել, թե ինչ է ուզում ասել հեղինակը, մինչդեռ սահմանումը պետք է ներկայացվի հստակ և ընկալելի տնտեսագիտական տերմինաբանությամբ:
3. Ատենախոսության երկրորդ գլխի 3-րդ պարագրաֆում ներկայացված նյութը, որը վերաբերում է ԵԱՏՄ երկրների մրցունակության առանցքային հիմնախնդիրներին և բարելավմանը նպաստող պայմաններին, ներկայացված են հիմքում չունենալով սեփական հետազոտության արդյունքները և ամբողջովին փոխառնված են այլ հետազոտողներից և կազմակերպություններից:
4. Աշխատանքում առկա են ոչ մեծ խմբագրական բացթողումներ և անճշտություններ: Մասնավորապես, Մակկոնելը և Բրյուն չէին կարող 90-ական թվականների վերջին ուսումնասիրել Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ինտեգրացիայի գործընթաց /էջ58/, քանի որ այդ ժամանակ նման միություն ուղղակի գոյություն չուներ:

Եզրակացություն

Նշված դիտողությունները հիմնականում հետապնդում են ատենախոսությունում

քննարկվող հիմնահարցերի հետագա ուսումնասիրությունների խորացման և բարելավման նպատակ և չեն ստվերում ատենախոսի կողմից կատարված հետազոտությունը և ստացված արդյունքները: Ամփոփելով շարադրվածը՝ կարելի է հավաստել, որ ատենախոս Ա.Սարգսյանը կատարել է արդիական և ուշագրավ հետազոտություն, որի արդյունքները ունեն որոշակի թե տեսական և թե գործնական նշանակություն:

Ատենախոսության սեղմագրում և հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները:

Վերը շարադրվածը թույլ է տալիս եզրակացնել, որ Արփինե Դավիթի Սարգսյանի «ՀՀ տնտեսության մրցունակության բարելավման հիմնախնդիրները ինտեգրացիոն գործընթացի պայմաններում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.01 – «Տնտեսագիտության տեսություն և տնտեսագիտական մտքի պատմություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,
«Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների
աջակցման կենտրոն» հիմնադրամի տնօրեն,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ Ա.Դարբինյան

Ա. Դարբինյանի ստորագրությունը հաստատում եմ
Գրասենյակի կառավարիչ՝ Ս. Մելիքսեթյան

02.04.2021թ